

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՑ

ԵՒ

ԻՐԱՆԻ ՆՈԽԱՇՈԽՄԾ ԱՐԱԲԱՑԻՆԵՐԻՑ

(Ա. ԿՐԻՄԱԿՈՎ)

Լաղարեան ճեմարանի մասնադիտական դասարանների պլովֆ. Ագ. Կրիմսկու այս ստուար գիրքը, ու 8, բաղկացած է 416 էջերից. աղբիւրները մանրամասնօրէն լիշուած են տասն և հինգ էջերում (3—18) և են՝ հին լոյն և լատին պատմագիրներ. Պարափյ, Ասորոց և Հայոց հեղինակներ, ՚իթիւս որոնց Եղնիկ, Եղիշէ, Սերէսս, Մ. Խորենացի, հնախօսութիւն, հին դրամնմներ. արևմտեան նորագոյն աղբիւրներից՝ Շպիդէլ, Ռոուլինսօն, Խւստի, Նեօլուկէ, Բռառուն, Կլինտոն, Հերցգերդ, Ռայթ և այլն:

Որովհեսև Հայոց նոր գրականութեան մէջ շատ սակաւ տեղեկութիւններ ունինք Հայաստանի հին դրացիների մասին, որոնք երկար տարիների ընթացքում ոչ միայն աղբել են մեր նախնեաց վրայ իրանց կուլտուրայով, այլ և աւատական դրութեան մէջ են պահել Հայաստանը կամ բոլորովին տիրապետելով՝ բաժանել են նրան իրանց մէջ, այս պատճառով ես կարևոր եմ համարում կանգ առնել լիշեալ գրուածքի վրայ և այնտեղից ամբողջ հատուածներ թարգմանել. իսկ այն դէպքերում, ուր պ. Կրիմսկի՝ Սասանեանց հարսաութեան պատմութիւնը աւանդելիս, ակնարկներ է անում Հայոց վրայ, լրացնել մեր տօհմային պատմութիւնը Գարագաշեանից, Ք. Պատկանեանից և այլ աղբիւրներից. միով բանիւ աշխատել լուսարանելու հայ Արշակունեաց արտաքին մասամբ ներքին քաղաքականութիւնը երկու դրացի պետութիւնների վերաբերութեամբ, կյաշողուկ՝

Մեծ հաճութեամբ տեղ ենք տալի մեր յարգ. աշխատակցի այս յօդուածին «Հումայր-ում. մի տեղ սակայն հեղինակը շատապել է Մ. Խորենացուն 197. հեղինակ լինելը վերջնական համարել. մինչդեռ, որքան մեզ յայտնի է, այդ ինչիցը դեռ երկար վիճաբանութեան նիւթ կարող է լինել, երբ լոյն տեսնի մեր մի այլ յարգ. աշխ. գիտն. Նորայր Բիւզանդացու ընդարձակ ուսումնառիւթիւնն այդ մտախն. ԽՄԲ.

արդեօք մեղ հաշտեցնել Կրիմսկուն Գարագաշեանի հետ, թողնում ենք ընթերցողի դատողութեան:

Այս երկտողյառաջաբանից լեռաց դառնանք Կրիմսկու գրքին: Ահայոց մատենագիրները, ասում է ոռուս գիտնականը, բաւականին տեղեկութիւններ են բովանդակում իւրեանց զբուածքների մէջ Սասանեանց հարստութեան մասին, որոնց վրայ լենլով պրօֆ. Ք. Պատկանեանը գրեց իւր հետեւեալ մաղիսարոսական շարագրութիւնը՝ Օպերա Իստորիա Հանականութեան (փոքր Պատմութեան Սասանեան հարստութեան): Համեմատաբար Ասորոց հեղինակների հետ, հայ հեղինակները պակաս յուսալի աղբիւրներ են: Պարսկաստանի ասորիները նեստորական աղանդաւորներ լինելով՝ Հռովմայեցւոց արևելեան կայսրութեան ոխերիմ թշնամիներն էին, հալածուած Հռովմայեցիներից և այդ պատճառով նոքա վայելում էին ոչ միայն Սասանեանց համակրութիւնը (փոքր բացառութեամբ), այլ և յարատե հովանաւորութիւնը. Հայերը, ընդհակառակն, ծգուում էին Հռովմայեցւոց կայսրութեան կողմը, որի բնակիչների հետ հասարակական կրօնն էին դաւանում. ուստի Պարսից կառավարութիւնը շատ խիստ կերպով էր վարւում Հայերի հետ և հայ պատմիները—ոչ անաչառ աղբիւրներ\*) են պարսիկների վերաբերութեամբ: Բացի գորանից նոցա տեղեկութիւնները Պարսկաստանի բոլոր երևոյթների մասին աւելի պակաս են, քան Ասորոց մօտ, որոնց երկրութիւն էր գտնւում Սասանեանց թագաւորների բուն մայրաքաղաքը:

Բայց այսուամենայնիւ այնպիսի անուններ, ինչպէս Եղիշէ Եղիշէ Վ դարու (զրագաշտականութեան պատմութեան համար), Ե-

\*) Արշակունեաց շրջանի մեր պատմիչների անաշառութիւնը բուն հայ իշխանների մասին ևս շատ կասկածելի է. Փ. Բիւղանդ, Եղիշէ, Ղ. Փարպեցի սիրահար են Մամիկոնեան տոհմի, Մ. Խորենացին գովարանում է Բագրատունեաց ցեղի իշխաններին. ուրեմն, կուսակցական ոգլուք են գրում. եթէ փոքր ինչ հեռուս գնանք, մի քանի դար յետոյ, կտեսնենք Յովհան Մամիկոնեան եպիսկոպոսին, Յովհաննէս կաթողիկոսին, Թովմա Արծրունուն, Մտեփաննոս Օրբելեանին, որոնք գովում են Մամիկոնեան, Արծրունեաց և Միւնեաց իշխանական տոհմերը.

զիշէ (դատողութիւններ սասանական, մոդութեան քաղաքական գերի մասին), Սերէսու եպիսկոպոս VII դարու (Սասանեանց վերջին ժամանակի վերաբերութեամբ) — հեղինակաւոր են հանդիսանում: Զափազանց ընկած է այժմ ամենահռչակաւոր հայոց պատմագիր Մ. Խորենացու, ազգային «Հայոց Պատմութեան» հեղինակի վարկը, ուր (պատմութեան մէջ) սփռուած են երբեմն տեղեկութիւններ Պարսկաստանի մասին: Առաջ կարծում էին, թէ Մովսէս Խորենացին ապրում էր V դարում: Ալժմ կարելի է լիովին ապացուցուած համարել, որ նա ամենևին V դարում չէ ապրել և ժամանակակից չէ եղել հնագոյն անցքերի, այլ հաւաքել է ուրիշի հաղորդածները և այս թւում Յունաց: Ինչպէս այժմ (Գարագաշեան և Կառիերի նախածեռնութեամբ) վերջնականապէս ապացուցուած է պրօֆ. Գ. Խալաթեանցի մանրակրկիտ քննութեամբ, Մ. Խորենացին օգտուել է VII—VIII դ. աղբիւրներից. հետեւաբար, հարկ է եղրակացնել, որ նա գրել է VIII-դ վերջում կամ IX-ի սկզբում: Շատ կարելոր է հին պարսկց վէպի<sup>\*</sup>) մասին այն տեղը Մ. Խորենացու մօտ, ուր նա հաղորդում է հին պարսկական զրոյցը Բիւրասպ Աժդակակի (Զոհակ), ինչպէս նորան կոչում է Մատեան թագաւորաց (Շահ-նամէ) նաև Ռոստոմի մասին<sup>\*\*</sup>):

Այժմ զիմենք բուն Սասանեանց պատմութեան, որ սերտ լարնչութիւն ունենալով հայոց պատմութեան հետ, միանգամայն նոր լցու է սփռում նորա վրայ, լուսաբանում է հայոց քաղաքական անցեալ կեանքի շատ հանդամանքները: Ուշի ուշով կարդալով կրիմսկու այս նշանաւոր երկը, մեր սակաւաթիւ բանասէրները կհամոզուին, որ առանց ուսումնասիրելու՝ հայաստանի երկու դրացի մեծ կուլտուրական պետութիւնների, այն է՝ Պարսից Սասանեանց միահեծան տէրութեան և բիւրանդական էայսորութեան պատմութեանը անհնար է հասկանալ մեր ազգային պատմութիւնը: Մեր նախնիքը անձեռնհաս եղան

\* ) Պարսից առասպեկեաց:

\*\*) Քանի որ Սերէսոսը (VII-դ) ճանաչում է Մ. Խորենացուն, այս վերջինս չէր կարող ապրել VII կամ IX դարում: Մ. Շ.

հղօր կենդրունական իշխանութիւն ստեղծելու մայր երկրում։ Հայր, ասում էր հանգ. պրօֆ. Ք. Պատկանեանը, միշտ հաւատարիմ ծառայ էր օտարին, և վատ անտես իւր տանը։ Բայց այն ժամանակից յետոյ երեսուն տարիներ են արդէն անցել և ներկայումս հայագիտութիւնը և արևելեան ազգերի պատմութիւնը ժոխացած են նորանոր ուսումնասիրութիւններով և հետազոտութիւններով, որոնցից գժուար չէ գուշակել, որ Սասանեանց օրերում հղօր հայաստանի գոյութիւնը ձեռնտու չէր ոչ Պարսից ոչ էլ Յունաց քաղաքասկան տեսակէտից։ Յիշեալ երկու պետութիւնների գլխաւոր նպատակն էր տիրապետել Ասորիթին և Միջազնետքին, որոնց համար նոքս ամբողջ դարեր մրցում էին իրար հետ. ինքն ըստ ինքեան այստեղից պարզ է, որ կազմակերպուած, հղօր հայկական մի թագաւորութիւն անցնելով մէկի կամ միւսի կողմը. համաձայն իւր շահերին, շատ կղըժուարացնէր մրցակիցների գործը. ուրեմն, հարկը պահանջում էր «բառնալ՝ի միշոյ զհայս, որ և կատարուեցաւ 390 թուին բաժանելով հայաստանը իրանց մէջ։ Արևելեան մեծագոյն մասը անցաւ Պարսից. իսկ արևմտեան փոքր մասը— Յունաց։ Բայց չկանխիենք պատմութիւնը և աշխատենք հակիրն խօսքերով ամփոփել այստեղ ուսու հեղինակի երկի բովանդակութիւնը, մերժընդ մերթլուսաբանելով մեր ազգային պատմութեան մութ կողմերը. մեր ասելիքը վերաբերում է լատիապէս Սասանեանց հարստութեան շրջանին՝ մինչև Արաբների պատմական տօպարէզ իշնելլ։»

«Սասանեանց ծաղրումը։ Արտաշիր I (224—242) և նորագծած սասանեան հարստութեան ընդհանուր բնաւորութիւնը։

Ֆարս նահանգը (Պերսիդա, կամ բուն Պարսկաստանը) կիւրոսի և Դարենի հայրենիքը, որտեղից ժագում էին նշյալէս Սասանեանը, Արշակունեաց ժամանակ բաւականին անկախութիւն էր վայելում, ինչպէս առհասարակ ընդունուած էր պարթևական թագաւորութեան մէջ ուրցյն նահանգների վերաբերութեամբ։ Երրորդ դարու սկզբում Քրիստոսից յետոյ, Ֆարսում կային բազմաթիւ մանր իշխաններ, որոնք, բնակուելով զանազան լեռնային խոռոչներում, միմեանց թշնամի էին հան-

զիսանում։ Ո՞մն Պապակ որդի թէ սերունդ Սասանի, ազգաւ Շիրազի արուարծանից, յաջողեցաւ տապալել Շիրազի իշխան Գողեհրին, որին ձառայում էր և բացի գորանից տիրեց Մարտի մայրաքաղաք Սասանին (Պերսեպոլիս)։ Տակաւին իւր կենդանութեան օրերում Արշակունեաց արքունիքից նա կարողացաւ իւր որդու Շապուհի համար թագաւորութեան իրաւունքը ծեռք բերելու բայց հաղիւ թէ Պապակը մեռաւ, նորա միւս որդին Արտաշիրը, ապստամբեցաւ եղրօրից, յաղթեց նորան և ինքը դարձաւ թագաւոր (211), և շուտով իւր իշխանութեան տակ միայրեց ամբողջ Մարսը։ Իւր ամենայն ծեռնարկութիւնների միջոցին Արտաշիրը աշխատում էր յենուել զրադաշտական հոգեսորականութեան վրայ։ Ճշմարիխ է, Զրադաշտի վարդապետութիւնը իրանում չէր հանգել ոչ մակելոնական ոչ պարթեական տիրապետութեան միջոցին, Արշակունիք ինքեանք էլ դաւանում էին Զրադաշտի կրօնը, սակայն ոչ եռանդուն կերպով։ Ընդհակառակն Արտաշիրը յանախ կրկնում էր. «գահենեցուկ է բազնի, իսկ բազինը — նեցուկ դահի. ո նանդել ոչ մակելոնական ոչ պարթեական մշակութիւնը մողութիւնը մողութիւնը և այսպէս ուղղակի Արտաշիրից է սկսում զրադաշտական մողերի մողեռանդ դասակարգի մշակումը, որ յետոյ այնքան նշանաւոր զեր խաղաց Սասանեան կայսրութեան մէջ և երեւելի հանդիսացաւ իւր անհամբերողութեամբ օտարահատւատների և աղանդաւորների վերաբերութեամբ։ Իրան բաւականին զօրեղ համարելով Արտաշիրը պատերազմ սկսեց արշակունեաց մնացեալ աւատական իշխանութիւնների դէմ (արևելքում Կերմանի, արև մուտքում Սուզիանի և այլն) և յաղթելով նոցա, առանց զժուարութեան տապալեց Արշակունեաց իսկ հարստութիւնը. ընդ ամենը աեղիունեցան երեք պատերազմներ, որոնց վերջնում ընկաւ Արտաւան V-դ թագաւորը։ Նորա զլուխը Արտաշիրը, ըստ աւանդութեան, կոխոսեց ոտքերի տակ։ Աղդ վայրկեանից Արտաշիր I (224—242) դարձաւ արքայից արքայ և հիմնեց հռչակաւոր Սասանեանց հարստութիւնը։

Ես արդէն լիշեցի, շարունակում է պ. Կրիմսկին, որ Սասանեանց պետութեան բնորոշ տարբերութիւնը Արշակունիներից

կայանում էր հոգեսրականութեան գերիշտանութեան մէջ։ Մի  
այլ լատկութիւնը սկսեալ նոյնպէս Արտաշրից — աւատական  
պետութիւնների ոչնչացման սիստեմն է, նոյս նահանգների  
դարձնելն և զնշումն աւատական հարստութիւնների։ Վեր-  
ջիններս Արտաշրից և յաշորդ Սասանեաններից թոյլատրուում  
էին միայն ծայրերի և սահմանակից նահանգների համար, զօր-  
չայտստանի թագաւորութեան (որի նուանման մասին հոգ էր  
տանում Արտաշրի որդի Շապուհ Ռուշինը), որպէս և արա-  
բական Հեր իշխանութեան կամ թագաւորութեան (Եփրատ  
գետի մօա) կամ փոքր ինչ լետին ժամանակներում հեռաւոր  
արեւելեան երկիրների համար միշին Ասիայում։ Բայց թէպէտ  
բուն Իրանում ուրոյն աւատական հորստութիւնները զնշուած  
էին, ուրիշ գէպքերում Արտաշրի և այլ Սասանեանների օրե-  
րում պետական կազմակերպութիւնը տոհասարակ մնաց նոյնը,  
ինչպէս որ էր Արշակունեաց ժամանակի Պետութեան Արշա-  
կունեաց բաժանումը 18 նահանգների (սատրապի) պահպա-  
նուեց և միայն Սասանեանց վերջին շրջանում դոքա միացան  
չորս փոխարքանների իշխանութեան տակ։ Դրան մեծամեծները  
կամ տեղական աւագանին (աղնուականութիւնը), որ կարելի է  
համեմատել Արքայսկան միշին դարերի բարոնների հետ, պահ-  
պանեցին իրանց ոյժը և միշտ կարող էին սպառնալ արքայից  
արքաներին, այն տարերերութեասմբ սակայն Արշակունեաց ժա-  
մանակից, որ Սասանեանց օրերում իրանց ազդեցութիւնը նոքա-  
հարկադրուած եղան բաժանել հոգեսրականութեան հետ։ 'Ի  
վերջոյ աւադանին հոգեսրականութեան հետ միասին կտղմեց  
մեծամեծների դասակարգ։ Ինչպէս կտեսնենք ստորև, սաստ-  
նեան թագաւորը ծգուում էր ինքնակալութեան, իսկ աւագանին  
և մոգերը ճգնում էին սահմանափակել արքայական ինքնակա-  
լութիւնը։ Այս երեսոյթը սասանեան պետութեան ներքին քա-  
ղաքական կեանքի գիտաւոր բովանդակութիւնն էր, որ սակայն,  
կորստարեր չէր երկրի բարեկարգութեան համար։ Ընդհակա-  
ռակն, թէ ներքին քարչութիւնը և թէ ելեմակից կառավարու-  
թիւնը հասցրած էր ներդաշնակ սիստեմի Արտաշրից սկսեալ,  
Իրանում հաստատւում էր անընդհատ բարեկարգութիւն, որ,

չորս դար յետոյ, երր ընկաւ սասանեան հարստութիւնը, Պարսկաստանի մահմետական կառավարիչները իրեւ կաղապար էին ընտրել իւրեանց համար, թէև չկարողացան հասցնել կարգը և նահանջների արդիւնարերութիւնը այն կատարելազործութեան, ինչ որ սասանեանց օրերումն էին:

Գալով արտաքին քաղաքականութեան՝ կարելի է Արտաշրի թագաւորութեան միջոցին ակնարկ տեսնել սասանեան պատմութեան յետագսյ ընթացքի վերայ, Ան է՛ մի կողմից Սասանեանք պատերազմներ են մղում Հռովմայեցւոց կայսրութեան դէմ (ապա մասնաւորապէս, Հռովմայեցւոց արևելեան կայսրութեան ալս. Բիւզանդիայի դէմ) Հայաստանի և Միջագետքի առթիւ. իսկ միւսից—արևելեան բարբարոսների սպիտակ հոնաց (Հեփթաղների, Քուշանաց) դէմ: Կոռիւ լարուած շրջանը բարբարոսների հետ (Վ-դ) խաղաղութեան շրջան է Յունաց համար: Այս չորեքդարեան կուռում Հռովմայեցւոց կայսրութիւնը սապարէղ հանելով մի շարք ժիր ու տաղանդաւոր կառավարիչներ վերջ ի վերջը յաղթանակող կողմն էր հանդիսանում լարճախ և այդ վիճակուեցաւ Արտաշրին փորձով տեսնել (233 թ), երբ նա միջամուխ եղաւ Հռովմայեցւոց ասիական երկիրները. բայց միւնոյն ժամանակ էլ Հռովմայեցւոց կայսրութիւնը միշա պիտի նայէր Սասանեանց վրայ, իրեւ արժանաւոր և հաւասար ախոյեանների վրայ, նա մանաւ անդ այն պատճառով, որ Պարսից յաջողւում էր ոչ սակաւ լցն—հռովմայեցւոց չարաչար պարտութեան մատնել և անարդանքով ծածկել նոցա անունը: Դարեւոր կռիւր Հռովմայեցւոց կայսրութեան հետ աղղեցութիւն ունեցաւ սասանեան մայրաքաղաքի տեղի՝ ընտրութեան վերայ ևս: Տեսականապէս մայրաքաղաք էր համարւում հին Ստանրը. այնտեղ էր և թագաւորական մեհեանը կրակի, ուր ի միշի այլոց կախ էին տալիս յաղթուած թշնամի թագաւորների գլուխները. բայց իրօք, գործնականապէս Սասանեանց դիմաւոր քաղաքը դարձաւ Արշակունեաց հին մայրաքաղաք Տիղրոնը, որի մօտ, Տիղրիս գետի միւս ափում շինուած էր քաղաքիս միւս կեսը—Սելւկիա («Բեհ—Արտաշր»): Հարուստ երկիրը, ուր կանգնած էր այս կրկնակի քա-

ղաքը, չէր պատկանում իրանին ոչ աշխարհականապէս, ոչ աղ-  
գագրականապէս, վասն զի այս տափարակը, իրանի բարձրա-  
ւանդակից դուրս, սեմական բնակչութիւն ունէր լատկապէս.  
բայց պատերազմական գործողութեանց ասպարիզին մօտ լինե-  
լու անհրաժեշտութիւնը ստիպեց Սասանեաններին՝ Արշակու-  
նեաց օրինակով, բնակութիւն հաստատել Տիգրոնում։ Անդհաստ  
յարաբերութեան արգասիքը Հռովմայեցւոց հետ էր նաև կուլ-  
տուրական ազդեցութեան փոխարինութիւնը. պետական, զի-  
նուորական կազմակերպութեան, արհեստների արդիւնաբերու-  
թեան մէջ — ամենուրեք կարելի է նշմարել լոյն — հռովմայական  
կուլտուրայի մեծ ազդեցութիւնը իրանի վրայ։ Ինչպէս կտես-  
նենք ստորև Խոսրով Անշշիրվանը 540 թ. մտնելով Ասորիք և  
տիրելով Անտիոքին, նորա բնակիներին գաղթել տուեց Տիգրոն  
և հոգ տարաւ, որ նոցա համար լատկացրած աւանում նոքա  
լիովին պահպանեն առաջուայ լոյն — հռովմայական կենցաղա-  
վարութիւնը։ Անկասկած է, որ Սասանեանց ժամանակ տեղի  
ունեցաւ Եւրոպական և ասիական Փօլկորի փոխարինութիւնը.  
հռովմայեցիք և լոյները չէին կարող չժանօթանալ Պարսկաս-  
տանի միջնորդութեամբ արևելեան, մտնաւորապէս հնդկական  
առակների ու վէպերի հետ և այլն. հաւասար կերպով և պէս  
պէս լոյն-հռովմայական սիրմէտներ պիտի մտնէին արևելք,  
այս թւում և Հնդկաստան։

Արդ զննելով Սասանեանց հարստութեան հիմնադրի թա-  
գաւորութիւնը, ես ցոյց տուի, թէ հոգեւորականութեան և  
աւագանու ազդեցութիւնը պետութեան ներքին կեանքի վրայ,  
պատերազմները լոյն — Հռովմայեցւոց և միշինասիական բար-  
բարոսների դէմ արտաքին կեանքում — այն երևոյթներն են իւ-  
րեանց հետևանքներով, որոնք բնորոշում են սասանեանց պատ-  
մութիւնը։ Այնուհետև լարգելի պրօֆեսորը խոստանում է  
իրողութիւնները աւանդել դարսւց դար։

Ինչպէս ընթերցողը լիշում է, Արտաշրի պատմութեան  
ընթացքում պ. Կրիմսկին երկու անդամ ակնարկեց Հայաստանի  
վրայ։ Կանգ առնենք այստեղ և տեսնենք, թէ որք էին թա-  
գաւորում այն ժամանակ Հայաստանում և վերջինս վայելում

Էր արդեօք անկախութիւն։ Պահկաւունի ցեղի թագաւորութիւնը կործանելուց յևաց Պարսկաստանում, Արտաշրի առաջին դորձը եղաւ աշխատել տասպալելու նաև Հայոց Արշակունի հարստութիւնը Հայաստանում, ուր այդ միջոցին թագաւորում էր Տրդատ II Խոսրովը, (որդի Վաղարշի, մեռած բանառում 216 թ), որ իւր թաղը ստացել էր 218 թ. Օնտոնինոս Կարակալլայի լուսորդ Մակրինոս կայսրից։ Հստ Դիռնի, առում է Գարսագաշեանը (անմ. Քննական պատմ. Հայոց. մ. II էջ. 268) Արտաշրի իւր թագաւորութեան սկզբում (226 թ.) արշաւելով Հայաստան, մեծ ընդդիմութեան հանդիպեցաւ այն ժումանակի թագաւորի կողմից, որի մօտ ապաւինած էին Արտաւան Վ-ի որդիքը։ Այն թագաւորն էր Տրդատ II, որդի Վաղարշի։ Զարմանալի չէ ուրեմն, որ Արտաւանի որդիքը՝ ապաւինելով Տրդատ II-ին կամ Խոսրովին, այնպիսի ստատկութեամբ ընդդիմացան Արտաշրին. վասն զի երկու թագաւորներ Տրդատ II (ըստ աղդային աւանդութեան Խոսրով) և Արտաւան, ինչպէս երեւում է, մօտ աղդականներ էին, հաւանականապէս Եղբայրներ իսկ։ Աղաթանգեղոսի «Եղբայրութիւն աղդականութեան» և Եղիշէի նամակի «հօրեղբայր» բառերին նայելով, մեր պատմութեան առաջին մասում (էջ 86, 87) ասացինք, որ Արտաւան և Խոսրով Եղբայրներ էին։ Ինչեղից Արտաշիրը, ըստ Դիրանի, աեսնելով Հայոց և Մարաց ընդդիմութիւնը, գնում է ժողովելու աւելի շատ զօրք Պարսից արևելեան սահմաններից և (230—234) պատերազմեր է մղում Հռոմվայեցւոց կայսր Աղեքսանդր Սևերոսի դէմ, որին, ինչպէս Երեւում է, Հայերը դաշնակից էին։ Մաքսիմինոս թրակացու կայսեր ժամանակ (235—238) մենք գտնում ենք, որ Հայերը օգնական նիղակակից էին նորան Դերմանացւոց պատերազմի միջոցին (236 թ.): Դորանից դժուար չէ գուշակել, որ Հայաստանը բաւականին անկախութիւն էր վայելում Հռոմվայեցւոց աղդեցութեամբ։ Գարագաշեանը Արտաշրի մահը դնում է 235—238 թուականներում, երբ նա պատրաստւում էր նոր յարձակում գործելու Հայոց և Հռոմվայեցւոց վրայ. այն ինչ ըստ Կրիմսկու Սասանեանց հարստութեան հիմնադիրը մեռաւ

242 թ. և նորան լաշորդեց որդին Շապուհ I (242—272), Հռովմայեցւոց և Յունաց մօա Սապօր: Սա շարունակեց հօր Արտաշրի արշաւանքները. Արտաշրի պարտութիւն կրելով 233 թ. Աղեքսանդր Սկերոսից, կրկին միջամուխ եղաւ Հռովմայեցւոց երկիրները Մաքսիմինոսի օրերում (236—238) և նորան լաշողեցաւ հիւսիսային Միջագետքում տիրել երկու ամրոցներին՝ Մծրնին և Խառանին: Շապուհ Առաջին արշաւելով Ասորիք՝ հոսաւ մինչև Անտիոք (242): Գորդիանոս III-ը արտաքսեց նորան, ինտ խլեց Միջագետքում վերցիշեալ երկու ամրոցները և վնոեց յառաջ ընթանալ Եփրատի ափերով և տիրել Տիգրնին: Այն տեղում, ուր Խաբոր գետը թափում է Եփրատի մէջ, Գորդիանոսը սպանուեց իւր թիկնապահների հրաժանատար արարացի Փիլիպպոսի ձեռքով 244: Սպանիչը իրան կայոր հրոշակելով, ամօթալից դաշն խաղաղութեան կապեց Շապուհի հետ, և դիշեց նորան Հայաստանը և Միջագետքը: Խաղաղութիւնը աւելց մի քանի տարի. բայց 251 կամ 252 թ. Շապուհ, օգուտ քաղելով Հռովմայեցւոց ներքին խռովութիւններից, նորոգեց պատերազմը և արշաւեց դէպի Ասորոց երկիրը: Միասորի կիրեադ առաջնորդեց Պարսից մինչև Անտիոք: Վերջապէս Վաղերիանոս կայսրը դուրս եկաւ Պարսից, բայց քանի մի պատերազմական գործողութիւններից յետոյ Միջագետքում, Եղեսիայի մօա գերի ընկաւ Շապուհի ձեռքը 260 թ. և գերութեան մէջն էլ մեռաւ: Այս դէպքից խրախուսուած Շապուհ յառաջ խաղաց դէպի փոքր Ասիա. սակայն պարտութիւն կրելով Հռովմայեցւոց Բաղդիստա զօրավարից, երբ վերադառնում էր Պարսկաստան, Ենթարկուեց անակնկալ նոր յարձակման Պալմիրայի իշխան Ողենատոս II կողմից և չարաչար շարդուեց. արքայական կանանցի մէկ ճասր Ֆնաց յաղթողի ձեռքում: Դորանից յետոյ Ողենատոս II-ը երկիցս պաշարեց Տիգրոնը: Որովհետեւ Պարսկաստանը չունէր մշտական զօրք, Շապուհը առաջին պարտութիւնից յետոյ, որ կրեց Պալմիրայի իշխանից, ընդմիշտ հրաժարուեց բիւզանդական երկիրներին տիրելու փորձերից և թոյլ տուեց Հայոց անցնել Հռովմի կողմի: Այնուհետև

լընթացս երեք հարիւր տարիների Պարսիկները էլ ոտք չկոխեցին Ասորիք մինչև Կաւաստ 1 և Խոսրով 1-ին։

Պետութեան մէջ Շապուհ հոչակուեց իւր շինարար գործունէութեամբ. նա մեծամեծ շէնքեր կառուցեց Շուշտերում (Սուղիանա), կանոնաւոր ոռոգման համար կարուն զետի շրերով դաշտերը ու այլիները. նշյն տեղում նա շինեց դունդե՛Շապուր քաղաքը, որ առաջին Արքասեանց օրերում համաշխարհային հոչակ ստացաւ, իրբե ուսումնական կենդրոն, ուր նեստորական քրիստոնէից զեկավարութեամբ ծաղկում էին յունական դիտութիւնները և արտրական ամիրապեսների ծեռքով հիմնուած էր բժշկական քարծր ուսումնարան, որի վարիչն էր Բոխտիշու բժշկական սերունդը։ Նշյն Շապուհի օրերում աշկարայ կերպով քարոզում էր Մանի պարսկի աղանդը, անարդել տարածուելով ամենուրեք, մինչև որ ինքն Մանին վերջապէս մողերի զրդմամբ Վռամ 1-ի հրամանով մորթաղերծ եղաւ և սպանուեց։ Ահա այս է Շապուհի թագաւորութեան էական կէտերը, ըստ Կրիմսկու։

Մենք վերը տեսանք, որ Հռովմայեցւոց ազգեցութիւնը հայաստանում վատարի Փիլիպպոս կայսեր շնորհիւ միառժամանակ փոխարինուեց պարսկականով։ Բայց ինչ եղաւ Տրդատ Ա-դ Խոսրով և ո՛վ յաշորդեց նորան՝ օտարազգի պատմագիրները չեն լիշում։ 218-ից, երբ Տրդատ II թագ ստացաւ Մակրինոսից մինչև Վաղերիանոսի գերութեան տարին՝ 260 թ. մենք դտնում ենք Արտաւազդ անունով մի թագաւոր հայոց, որի նամակից, գրուած Շապուհին, պարզ երևում է, որ հայերը նիզակակից էին Պարսից մինչև Աւրեղիանոս կայսրը (270—275)։ Թիշեալ նամակը Գարագաշեանը մէջ է բերում թարգմանութեամբ լատին պատմիչ Տրեբեղիսս Պողիոնից և է հետևեալը.— «Արտաւազդ Արքայ հայոց գրեաց առ Շապուհ. ՇՈՒՐԱԽ եմ ընդ փառս քո, այլ երկնչիմ թէ արծարծեցեր զնուր պատերազմի մանաւանդ քան յաղթեցեր։ ԶՎաղերիանոս խնդրեացեն և՝ որդի նորա, և՝ թոռն, և զօրավարք Հռոմայեցւոց, և համօրէն Գաղղիա, և Ափրիկէ ողջոն, և բովանդակ Սպանիա, և՝ ամենայն Խտալիա, և ամենայն զօրք, որ են ՚ի

Լիւրեկ և յարեելս և 'ի Պոնտոս դաշնակիցք Հռոմոց կամ ընդ իշխանութեամբ նոյա: Կալար դու զայր ոմն ծեր, և յարուցեր հակառակ քեզ զամենայն ազգս երկրի, թերես և հակառակ մեզ՝ որ առաքեցաք քեզ օդնական. դրացի քո եմք և կրեմք հանապազ վիշտս, լորժամ կոռուկքդ ընդ միմեանս» (Գարագ. Քնն. պատմ. մ Ա էջ 274):

Բայց դառնանք այստեղ Պարսից պատմութեան, որ աւանդում է պրօֆ. Կրիմսկին: Շապուհին կարճ միջոցում յաջորդեցին՝ «Որմիդդ I (272—273), Վռամ I (274—277): Վռամ II-րդ (277—293), Վռամ III-րդի (293) և Ներսենի (293—303) թագաւորութիւնը հետաքրքիր է միայն Հռովմայցւոց յարաքերութիւնների շնորհիւ. Վռամ III-րդի հետ պատերազմեցին Պրորոս և նորա յաջորդ Կարոս. այս վերշին կայսրը արդէն տիրել էր Տիղրոսին, բայց յանկարձակի մեռաւ. Ներսեն փոքր մի յաջողութիւնից յետոյ, ջարդուեց Հայաստանում Դիոկղետիանոսի կեսար Գոտղերիսակից, որ ղեկավարում էր Դիոկղետիանոսի—Հռովմայեցւոց հռչակաւոր կայսեր (284—305) հրահանգներով, որ նոր դարապլուխ սկսեց Հռովմայ պատմութեան մէջ. Ներսենի կանայք և որդիք գերի ընկան և այս ժամանակ խաղաղութեան դաշն կապուեց (298), որ տևեց 40 տարի (մինչև Շապուհ II-ի պատերազմը): Ալդ դաշին զօրութեամբ Պարսկաստանը հրաժարուեց Հայաստանից և Միջագետքից և մինչև անգամ զիշեց Տիգրիսի ծախ ափի մի մասը մինչև Քուրդիստան (մասն այսպէս ասած Փոքր Հայոց):»:

Մ. ՇՈՎՐԵԱՆ

Կը շարունակուի